

Թեստ

1. Գտիր այն թիվը, որը պարունակում է 4 հազարյակ, 7 տասնյակ և 8 միավոր

- 1) 478 2) 4078 3) 4708 4) 4780:

2. Գտիր ամենամեծ երկնիշ և ամենափոքր հնգանիշ թվերի գումարը:

- 1) 10099 2) 10010 3) 100098 4) 99

3. Ինչպե՞ս կփոխվի երկու թվերի արտադրյալը, եթե արտադրիչներից մեկը մեծացնենք 8 անգամ, իսկ մյուսը թողնենք նույնը:

- 1) կմեծանա 8 անգամ 2) կփոքրանա 8 անգամ
3) կփոքրանա 8-ով 4) կմեծանա 8-ով 5) նույնը կմնա:

4. Գտի՛ր 9729 թիվը 1000-ի բաժանելիս ստացված մնացորդը:

- 1) 9 2) 29 3) 729 4) 0

5. $6556 > 65 \cdot 6$ արտահայտության մեջ աստղանիշի փոխարեն n թիվը պետք է գրել, որ ստացվի ճիշտ անհավասարություն:

- 1) 6 2) 7 3) 8 4) 4 5) 5:

6. n շարքում են թվերը դասավորված աճման կարգով:

- 1) 1345, 1356, 1467, 1678

- 2) 6976, 6965, 6854, 6010
- 3) 4343, 5787, 1563, 8921
- 4) 5257, 5563, 6739, 352
- 5) 8276, 8735, 3459, 9988:

7. Եթե 6 տ 4 ց 5 կգ –ը արտահայտենք կլիլոգրամներովգրամներով, ի՞նչ թիվ կստանանք:

- 1)6405 2)6450 3) 6045 4)645

8. $120 -$ թվի $\frac{5}{6}$ մասը կլինի

- 1)52 2) 144 3) 100 4) 20 5) 2

9. 64 սմ պարագիծ ունեցող քառակուսու կողմի երկարությունը կլինի

- 1) 6 2) 8 3) 32 4) 16:

10. $616 \cdot 50 - 84210 : 70 + 163$ արտահայտության արժեքը կլինի

- 1) 29434 2) 29400 3)29760 4) 29597

11. Թվային հաջորդականությունը կազմված է հետևյալ կանոնով.
առաջին անդամը 1 է, երկրորդ անդամից սկսած յուրաքանչյուր անդամը հավասար է իր նախորդի և 3 թվի գումարի կրկնապատիկին:
Գրիր այդ հաջորդականության հինգերորդ անդամը:

12. Գրիր ամենամեծ քառանիշ թիվը, որը բաժանվում է 5 -ի, 2 -ի :

13. Քառակուսու մակերեսը 49 քառակուսի մետր է: Գտի՛ր քառակուսու պարագիծը:

14. Տրված թվայն հաջորդականությունում օրինաչափություն գտիր և գրիր հաջորդ թիվը:

10, 18, 26, 34, 42,

15. Քառակուսի հողամասի երեք կողմը շրջապատված է 48 մետր երկարություն ունեցող ցանկապատով: Գտե՛ք հողամասի մակերեսը:

16. Ուղղանկյան լայնությունը 26 սմ է, իսկ երկարությունը 2 անգամ մեծ է լայնությունից: Գտիր այդ ուղղանկյան պարագիծը:

17. Արկղում կար 30 միատեսակ գնդակ: Արկղից հանեցին դրանց $\frac{5}{6}$ մասը: Քանի՞ գնդակ մնաց արկղում: